

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ելույթը Կապանի օրվա նվիրված հանդիսավոր նիստում

Սիրելի հայրենակիցներ.

Սիրելի կապանցիներ

Սյունյաց թագավորանիստ Կապանի տոնը այս տարի հատուկ խորհրդանշական իմաստ է ստացել և առավել արժևորվել մեզ համար, որովհետև այն նշվում է Հայաստանի Անկախության 20-ամյակի և Վահանավանքի 1100-ամյակին նվիրված տոնակատարություններին զուգահեռ:

Անկախության տարիների պատմությունը արտացոլվում է մեր մարզկենտրոնի կյանքի և զարգացման մեջ՝ կազմելով այս բազմադարյա քաղաքի և սյունյաց ժողովրդի պատմության կարևորագույն ու անջնջելի էջերից մեկը:

Ռեսուրսների պակասը, շրջափակումը, ազատագրական պատերազմը, որի հենասյուններից մեկը եղել է Կապանը, ամբողջությամբ արտացոլվել է նրա կենսագրության մեջ: Նշված գործոնները ինչպես նաև խորհրդային շրջանում կայացած հին կապերի փլուզումը և դրան հաջորդած արդյունաբերության անկումը առանձնահատուկ ծանր հետևանքներ ունեցավ գրեթե ամբողջությամբ արդյունաբերական հենքի վրա գտնվող Կապանի համար: Սակայն հենց ձեր տոկունության, ձեր աշխատանքի և ձեր նվիրվածության արդյունքում է, սիրելի կապանցիներ, որ քաղաքն էապես շտկել է իր մեջքը և արդեն քայլում է առաջ: Սրանք հենց այնպես ասված խոսքեր չեն և դրանում հավաստիանալու համար բավական է միայն զուգահեռ անցկացնել 90-ականների վերջերի հետ և ակնհայտորեն տեսանելի կդառնա այն առաջընթացը, որ մենք ունեցել ենք հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում. լինի դա հանքարդյունաբերության,

քաղաքաշինության, գյուղատնտեսության, առողջապահության, կրթության թե մշակույթի ոլորտները:

Ինչպես ծննդյան օրը չափահաս մարդու համար, այնպես էլ արդեն իսկ ավանդական դարձած “Կապանի օր” տոնը քաղաքային իշխանությունների և ինչու չէ, շարքային կապանցիների համար, յուրատեսակ հանգրվան է մտորելու անցած ուղու, ձեռքբերածի ու բացթողումների, առկա խնդիրների ու անելիքների մասին:

Մենք երբեք գլխահակ չենք եղել մեր անցյալի համար, իսկ ներկայի առումով վստահաբար կարող ենք պնդել, որ այլևս օրակարգում է ոչ թե եղածը պահպանելու խնդիրը, այլ կառուցելու, նորը ստեղծելու և մարզի ու համայնքների համար կայուն զարգացում ապահովելու հրամայականը:

Այսօր մեր պետության բյուջեն աճել է բազմաթիվ անգամ և դրան համեմատ առաջնային ուշադրություն է հատկացվում համայնքների զարգացմանը: Իսկ համայնքների զարգացման և կենսագործունեության առաջնային ցուցիչները ենթակառուցվածքներն են: Վերջին տարիներին հաջողվեց վերականգնել և ըստ էության՝ ամբողջովին նորից կառուցել Կապանի գազամատակարարումը, էականորեն բարելավել ջրամատակարարումը, վերականգնել քաղաքի փողոցների լուսավորությունը, իրականացվել ասֆալտապատման ու բակերի հիմնանորոգման մեծածավալ աշխատանքներ: Կապան քաղաքում էական լուծում է ստացել բնակչության ամենացավոտ հարցերից մեկը՝ հարթ ու լանջավոր տանիքների նորոգման խնդիրը:

Իրականացված ծրագրերի զգալի մասը իրականություն է դարձել ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության՝ մարզի նկատմամբ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքի շնորհիվ:

Ցանկանում եմ ընդգծել, որ մարզկենտրոնի բոլոր կատարվող և նախատեսված վերափոխումները առաջնայնորեն ուղղված են մեր համաքաղաքացիների

սոցիալական խնդիրների լուծմանը և նպատակ են հետապնդում նրանց կենսապայմանների բարելավումը:

Կարծում եմ, պարտավոր ենք արժանին մատուցել նոր ժամանակների Կապանի բոլոր քաղաքացիներին, հասարակական-քաղաքական ու մշակութային բոլոր այն գործիչներին, որոնք մաս են կազմել Կապանի հարուստ տարեգրության, պատմության ու կենսագրության կերտման գործին, փոխանցելով մեզ այն լավագույն արժեքները, որը պիտի պահպանենք ու զարգացնենք:

Այսօր, առանց վարանելու կարող ենք պնդել, որ Կապանը կայուն զարգացող քաղաք է, որը հպարտությամբ է նայում իր 16-դարյա անցյալին և վստահությամբ՝ ապագային:

Շնորհավոր տոնդ Կապան: